

ՅԵ. ՎԱՐԴԱ




ՆՈՐ ՅԵՐԵՎԱՆԻՑԹՆԵՐ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՄԵԶ

ԿՈՒՍԿՐԱՑ

1934

ԵՐԵՎԱՆ



ՑԵ. Վ. Ա. Բ Գ. Ա.



ՆՈՐ ՅԵՐԵՎԱՆԻՑԹՆԵՐ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՄԵԶ



Թարգմանեց ՑԵ. Տ.-ՄԻՆԱՍՅԱՆ

Խմբ. Ա. ԱԴՈՅԱՆ

Հ Ա Խ Ե Հ Ա



Е. ВАРГА
НОВЫЕ ЯВЛЕНИЯ В МИРОВОМ
ЭКОНОМИЧЕСКОМ КРИЗИСЕ

Партиздат—1934—Эривань

Ընթեցողին առաջարկվող այս
աշխատաւրյունը փաստական տվյալ-
ների մի շարադրամի և միջազգային
տնտեսական նգնաժամի մասին, ինչ-
պես և այդ տվյալների վերլուծու-
թյունը: Կարծում ենք, վարայն կարող
ե ոգտակար լինել կուսակցական
աշխատողների համար: Գիրքն նրա-
նքը պահպան է ընկ. Ստալինի խօր-

86. Վարքաւ.

Մոսկվա, 7/1—1934թ.

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Այն որվանից, յերբ լիովին կազմավորվեց արտադրության կապիտալիստական յեղանակը, նրա շարժումը կատարվում է ցիկլային ձևով։ Յուրաքանչյուր վերելք վերջանում է արտադրության կապիտալիստական յեղանակի բռնոր հակասությունների բռնի պայմբեցումով՝ գերարտագրության ցիկլային ճգնաժամի մեջ, վորը միենալույն ժամանակ այդ հակասությունների ժամանակավոր բռնի լուծումն է հանդիսանում։ Այդպիսով հետեւում է ցիկլը ցիկլի հետեւից, ճգնաժամը՝ ճգնաժամի։

Բայց ցիկլերի ու ճգնաժամերի այս հերթափոխությունը վորակապես միատեսակ յերեսոյթների մեխանիկական կրկնությունը չեւ Յուրաքանչյուր ցիկլ ու յուրաքանչյուր ճգնաժամ տարրերվում են միմյանցից իրենց կոնկրետ պատմական առանձնահատկություններով։ Յուրաքանչյուր ցիկլ ու յուրաքանչյուր ճգնաժամ իր առանձնահատուկ պատմական տեղն և գրավում կապիտալիզմի զարգացման մեջ։ Այս ցիկլային շարժման մեջ եւ կատարվում նաև հանդրվանների հերթափոխությունը արտադրության հենց կապիտալիստական յեղանակի զարգացման մեջ—անցումը կապիտալիզմից, աղատ մրցությունից դեպի իմպերիալիզմ ու կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարաշրջանն՝ իրեւ իմպերիալիզմի առանձին զարաշրջան։

Վո՞րն է 1929 թվին սկսված ճգնաժամի պատմական տեղը։

Այս ճգնաժամը, ինչպես մատնանշում եր ընկ. Ստալինը կուսակցության XVII համագումարում, առաջին համաշխարհային ճգնաժամն է պատերազմից հետո, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարաշրջանում։ Ճգնաժամի այդ պատմական տեղն եւ

հենց վորոշում և նրա կռնկրեստ առանձնահատկությունները։ Անտարակույս գերարտաղրության ցիկլային ճզնաժամ լինելով՝ այն ամեննեին Շնորմալը ճզնաժամ, նախորդ ճզնաժամերի պարզ էկրկնությունը չի հանդիսանում, ճզնաժամի շարժումը սաստիկ ձևափոխված եր կապիտալիզմի այն ընդհանուր ճզնաժամի աղղոցցության հետեւանքով, վորի հիման վրա այն տեղի յի ունենումը. ագրարային ճզնաժամի հնտ խառնաշյուսվելու հետեւանքով, վորը կապիտալիզմի ընդհանուր ճզնաժամի մասն և հանդիսանումը. զների բացառիկորնն խոր անկման հետեւանքով՝ մասամբ համաշխարհային պատերազմի ժամանականից մնացած զների մակարդակի բարձրացման լիկիվուցցիայի կարգով. մոնոպոլիստական կապիտալի ու նրա պետության՝ ճզնաժամն արհեստականուրեն հաղթահարելու համար ձեռք առած միջոցառումների հետեւանքով, վորոնք (միջոցառումները) վարկային ճզնաժամի պայմանը սարտիկուլացցրին ու վերջին հաշվով ավելի ևս խորացընին ճզնաժամն ու յերկարացըրին այն։

Այս բոլորի հետեւանքով՝ առաջին նաևախարհային ճըդաժամը կապիտալիզմի ընդհանուր ճզնաժամի ժամանակաշրջանում ավելի խորն և, ավելի յերկարատև և և բոլոր տեսակետներից ավելի ավելի չ, քան նախկին ցիկլային ճզնաժամերից վորեւ մեկը. Ճզնաժամն յերևան հանեց նաև միքանի վորակապես նոր մոմենտներ, վորոնք նախկին ճզնաժամերից վոչ մեկի մեջ ևլ տեղ չունեյին, այն և՝ վայրութաների արժեզրկումը, վոր ընդգրկել և զրեթե բոլոր կապիտալիստական յերկերները, արտաքին պարտքերի համարյա ընդհանրական չի ճառումը, կապիտալի արտածման զրեթե լիսակատար զաղարեցումը։

Այն օտարանակ, յերբ համաշխարհային ճզնաժամը կապիտալիզմն հետ նետեց դեպի նախապատերազմական մակարդակը, արտադրողական ուժերի զարգացումը, սոցիալիզմի կառուցումը Խորհրդային միության մեջ բուռն տեմպերով՝ առաջ եր ընթանում։ Ծնտեսական ճզնաժամը ամբողջ աշխարհի աշխատավորների առաջ պայման կերպով լուսավորեց տնտեսության խորհրդային միութեմի առավելությունները կապիտալիստականի համեմատությամբ։ Ցերկու սիստեմների պայքարը տնտեսական, սոցիալական ու կուլտուրական ընազավառում վճռված և մեր ուստին։

Ճղնաժամը ծայրահեղ սաստկությամբ վատթարացրեց բանվոր դասակարգի ու աշխատավոր դյուղացիության զբությունն ամրող աշխարհում և հենց զրանով դասակարգային հակասությունները ծայրահեղ սրման հասցըք ։ Դրա հետևանքով սաստիկ ընկավ սոցիալ-ֆաշիզմի, բուրժուազիայի այդ զինավոր նեցուկի, ողգեցությունը (չնչին բացառություններով — Նորվեգիա, Շվեյցարիա)։ Ամենադիմավոր սոցիալ-ֆաշիստական կուսակցությունները — գերմանականը, ֆրանսականը, անգլիականը — պառակտվեցին։ II Խնաերնացիոնալը քայքայվում է Բուրժուազիան ավելի ու ավելի ստիպված և դեն նետելու պարլամենտարիզմի ու տառասարակի բուրժուական գենոկրատիայի մեթոդները, — վորոնք խոչընդուն են դարձել բուրժուազիայի համար, — և արագությամբ վրա հասնող հեղափոխական ճղնաժամի հանրեալ փրկություն վորոնելու բացահայտութեական Փաշիստական դիկտատուրութիւնը։

Միաժամանակ ճղնաժամը ըոլոր յերկիրների տնտեսական պտտերազմ առաջացրեց միմյանց դեմ, վորը մի յուրատեսակ նախագուռն և հանդիսանում պատերազմի համար, զինված պայքարի սկիզբ դրեց աշխարհի նոր վերաբաժանման համար Հեռավոր Արևելքում, ումանր պատերազմներ առաջացրեց Հարավային Ամերիկայում, տնտեսական քաղաքականությունը դիտակցորեն ուղղեց դեպի ապագա պատերազմն ու ինտերվենցիան ԽՍՀՄ դեմ։ Այդպիսով՝ ճղնաժամը արձակեց ու արագացրեց կապիտալիզմի ծամանակավոր կայսերացման վախճանը, խորապես ցնցեց ամրող կապիտալիստական սիստեմը, կապիտալիզմի ընդհանուր ճղնաժամը բարձրացրեց նոր աստիճանի և նպաստեց հեղափոխական ճղնաժամի որիշելիքի նախադրյալների հասունացմանը։

«Ի՞նչպիսի ներքին դասակարգային հակասությունների արտակարգ լարվածությունը կապիտալիստական յերկիրներում, այնպիս նաև միջազգային հակամարտությունների արտակարգ լարվածությունը վկայում և հեղափոխական ճղնաժամի որյեկտիվ նախադրյալների այնպիսի հասունության մասին, վոր ներկայում աշխարհն արդեն կիսա մոտենում և հեղափոխությունների ու պատերազմների մի նոր շրջանի»։

1 Կիդկի XIII պլենումի թեզիսները

Արդի գրության յուրահատկությունն այն է, վոր մինչդեռ
գերաբուղության ցիկլային ճգնաժամը վերջ դրեց հարաբերական
կայունացմանն ու ընդհանուր ճգնաժամի նոր աստիճանին հասց-
ընց, ճգնաժամն ըստինքյան (շարժման այն ներքին սրենքների
ուժով, վորոնք գործում են նաև ընդհանուր ճգնաժամի դարա-
շրջանում) 1932թ. կեսին ակներերեն արդեն անցել եր ամենա-
ցածր կետից և ներկայումս անցնում և զգեպրեսսիայիշ փուլը—
զեպրեսսիա կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ու կայունաց-
ման վախճանի բազիսի վրա։ Այս զեպրեսսիան վորակապես ևս
այնպես տարբեր է զեպրեսսիայի բոլոր նախկին փուլերից, ինչպես
և ճգնաժամն ինքը։

Վորակեսղի ավելի ցայտուն կերպով ցույց տանք այդ նոր
յերենույթը, մենք ստորև տալիս ենք առանձին կերպով ճգնաժամի
կարևորագույն փաստերն ամբողջությամբ առած և նրա դիմա-
միկան վերջին յերկու տարվա ընթացքում։

ԱՐԴՅՈՒՆ ԳՈՒԽ

ՃԳՆԱԺԱՄԻ ԲՆԴԴԱՆՈՒՄ ՊԱՏԿԵՐԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՊԻՏԱԼԻ ԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՀՈՒՄ ԵՎԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՑԻՔԻ ԽՈՐՀՄԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Արդյունաբերական ճգնաժամի խորությունը բնորոշվում է դերմանական կոնյունկտուր-ինստիտուտի ինդեքսի հետեւյալ հաշվարկումներով¹:

Տ ա ր ի ն ե ր ը	Կապիտալիստական աշխատքների արդյունաբերական արտադրանքը	Արդյունական արտադրանքը	1923 թ. = 100	
			1913	1929
1913	73,0			70,0
1929	107,0			124,0
1930	90,5			159,5
1931	77,9			198,6
1932	66,1			206,5
1933 (առաջին 10 ամիսները)	74,9			217,0

¹ 1913 և 1929 թ. թվայները վերցված են Դերմանական կոնյունկտուր-ինստիտուտի հատուկ հրատարակությունից (Հավելվածներ) № 31, էջ 67, Մնացած տարիների տվյալները վերցված են «Կոնյունկտուրային հետազոտությունների յեռամայ» հաշվետվություններց, հրատարակության ծրագ տարի, տեսքակ 3, մասն Բ.

Այս աղյուսակի զլիսավոր հանրագումարն հետեւյալն է.

ա) կապիտալիստական աշխարհի արդյաւնաբերական արտադրանքը 1932 թ. մասավորպես $10^9/\text{ռուբ}$ ավելի ցածր եր 1913 թ. իսկ Խորհրդային միուրյան մեջ՝ $200^9/\text{ռուբ}$ ավելի բուրգ եր¹.

բ) ճանածամի ընթացքում, 1929 թվից մինչև 1932 թվիր, կապիտալիստական աշխարհի արդյաւնաբերական արտադրանքն ընկալ $40^9/\text{ռուբ}$, իսկ Խորհրդային միուրյան մեջ այն ավելացավ մասավորպես $67^9/\text{ռուբ}$ ²:

Այս բոլոր տվյալները վերցված են Գերմանական կոնյունկտուր-ինստիտուտի հաշվարկումներից, վոր այդ ինստիտուտը կատարել է արդեն ֆաշիզմի շրջանում:

Այդ թվերի առթիվ անհրաժեշտ է նկատել հետեւյալը.

ա) կապիտալիստական աշխարհի արտադրության մասին յեղած տվյալները, ինարկե, միմիայն մասավոր կոպիտ թվեր են.

բ) Խորհրդային միության ինդեքսը կոնյունկտուր-ինստիտուտը հաշվել է մեր հրատարակած տվյալների հիման վրա՝ արդյունաբերության առանձին ճյուղերի մեջ յեղած արտադրության մասին:

Արդյունաբերական արտադրության առանձնապես ուժի անկումը արդի ճգնաժամի միջոցին բացատրվում է նրանով, վոր չնմանվելով նախկին ճգնաժամերին, բոլոր կապիտալիստական յերկրներն ու արդյունաբերայրյան բայոր ճյուղերը (բացառությամբ գույտ ռադական արդյունաբերության 1932—1933 թ. թ.) բանված են նզնածամով.

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ 1929 ԹՎԱԿ ԾԵՎ ԽՈՐՀԱԴԱՅԻՆ, ՄԻՈՒԹՅՈՒՆԻ
1933 ԹՎԱԿ

Ստորև դրված աղյուսակը մի համեմատություն է խոշորագույն կապիտալիստական յերկիրներում 1929 թվին, այսինքն՝ բարձր կոնյունկտուրայի տարին, կատարված միքանի կարևորա-

¹ Հետովանի հաշվարկումների համաձայն՝ ԽՍՀՄ արտադրանքը 1933 թվին $262,80^9/\text{ռուբ}$ ավելի բարձր եր, քան 1913 թ. արտադրանքը:

² Գիտովանի տվյալներով՝ ԽՍՀՄ արտադրանքի առաջը 1939—1933 թվականների ընթացքում $1020/\text{ռուբ}$ եր կազմում:

դույն ապրանքների արտադրության ու Խորհրդային միության-
1933 թ. արտադրության միջները:

	Կազմակերպության յերկիրները 1929 թ.				Խորհրդային միության 1933 թ. (Պետության ազգային նկատմամբ)
	ՀԱՄԱՆ	ԱՆԳԼԻԱ	ՖՐԱՆՍԻԱ	ԴԵՐՄԱ- ՆԻԱ	
Ածուխը (միլիոններով)	552	262	54	163	76.7
Նավթը ¹	138	—	—	—	23
Զաղացները ²	43	7.7	10.3	13.2	7.25
Պաղպանը ³	57	9.8	9.7	16	6.9
Տրակարները ² (հազարներով)	197	—	—	—	75
Կառավարչությունները	37	—	—	—	10.6
Ավտոմոբիլները ¹	5358	239	254	101	49.5
Բանական սպառությունը ³ (հազար տաններով)	1597	626	272	296	424

Հետեւյալ թվերը համեմատական տվյալներ են տալիս ամբողջ արդյունաբերական արտադրանքի ու մեքենաների արտադրության մասին ըստ արժեքի, վորովհետև արտադրանքի այլառանձնակող անկարելի յերկիրական ծավալի՝ համեմատությունը:

1 «Աղջկերք լիգայի վիճակագրական տարեզիքը» 1932/33 թ.

2 «ՀԱՄԱՆ-ի վիճակագրական տեղեկատու».

3 «Բանական միջազգային վիճակագրություն».

Ամբողջ արդյունաբերական արտադրանքի համախառն
արժեքը (միլիարդ վուլի ուրիներով)

Դաշտավայրական յերկիրները 1929 թ.
1929 թ. գներով

ՀԱՄՆ Անզիա Գերմանիա Ֆրանցիա

189 89 39 29

Խորհրդային միությունը 1933 թ.
Պետողանի 1926/27 թ. արժակների
Համաձայն՝²

32—33

Այս տվյալները ինարկե, միմիայն մօտավոր գնահատական լինելով, ցույց են տալիս, վոր մեր արդյունաբերական արտադրության ներկա մոմենտում նաև ե մօտավորապես նեվրոպայի յերեք խուզ արդյունաբերական յերկիրների — Ֆրանչիայի, Անգլիայի ու Գերմանիայի — 1929 թ. արդյունաբերական արտադրության մակարդակին, յերեք 1926/27 թ. ուրիշն» վուլի ուրիշուն նախառարկեց:

Այստեղ հարկավոր ե նշել, վոր տնօտեամեական սիստեմների առարկերության հետևանքով մեր թվերը միմիայն մօտավորապես կարելի յէ համեմատել կապիտալիստական յերկիրների թվերի հետ: Կապիտալիստական յերկիրներում արտադրության համախառն արժեքը խիստ շատ կրնակի հաւաքարկութեան և բովանդա-

¹ Այս թվերն հաշվարկված են հնայիալ տվյալների հիման վրա.
ՀԱՄՆ-ի համար — 1929 թ. ցուցակագրությունը, վոր հաշվարկված է Հանդուն ենդ-Թեմբըքի Նկանութիւն Սերգիոս-ի 1929 թ. արդյունաբերական արտադրության ինդեքսի հիման վրա, հաշվի առնելով զների շարժումը.

Հերմանիայի համար — Կոնյունկտուր-ինստիտուտի 1928 թ. տվյալները հշման վրա, այն ձեռք, ինչպես և Անգլիայի համար.
Ֆրանչիայի համար — Կոնյունկտուր-ինստիտուտի 1932 թ. տվյալները հիման վրա, վորոնց հաշվարկված են Ֆրանչիայի բաժնի համապատասխանությամբ համաշխառային արդյունաբերական արտադրության մեջ և հաշվարկված են այնպէս, ինչպես և Անգլիայի համար:

Ամերիկայի ազգի ճշգրիտ են ՀԱՄՆ-ի վերաբերյալ տվյալները, ամենից ազելի պակաս ճշգրիտ — Ֆրանչիայի վերաբերյալ տվյալները:
² Պետողանի տվյալները խոշոր արդյունաբերության համախառն արտադրության մասին (առանց փայտամթերութերի ու ձկուրդյանաբերության),

³ Ծեթի մենք միշտ անգամ ընդունենք, վոր 1926/27 թ. ուրիշն համար եր 80 կողմէկի, այդ գեղարքում ել ԽՍՀՄ արդյունաբերական արտադրանքի համախառն արժեքը մոտավորապես համառում և նեվրոպայի յերեք արդյունաբերական յերկիրների մակարդակին:

իր մեջ, վորովնետե արտադրությունը բաժան-բաժան և արգան բազմաթիվ առանձին ձեռնարկողների միջև և կիսաֆար-բիկուսը մի ձեռնարկությունից մյուսն անցնելիս՝ ամեն անդամ ամբողջ համախառն արժեքը ներկայանում և իրեն նոր արտադրունքը՝ Մեզ մոտ այդ բանը տեղի յեւ ունենում շատ ավելի պահանջական չափով. Ընդհակառակը, արտադրույան մեր ծախմերն ընդհանուր առմամբ ավելի բարձր են: Այս յերկու միմյանց հակառակ դորձուներն, ըստ յերեսութիւն, ավելի կամ պակաս չափով փոխադրամաբար հավասարակշռվում են: (Դժբախտաբար, հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները բացակայում են):

Մեր հաշվիների համար իրեն ստուգում կարող ե ծառայել Դերման ական կոնյունկտուր-ինստիտուտի գնահատականը, վորը հանելի ձևով և վորոշում առանձին յերկիրների տեսակաբարելիուը հետպատերազմյան տարիների համար (մինչև ճգնաժամը):

ՀԱՄՆ	Դերմանիա	Անզիա	Ֆրանսիա	ԽՍՀՄ
45	11.5	9.3	7	4.7

Մեր վերելքը խորապես փոխեց գրությունը:

Ստորև բերված պղյուսակը տալիս է մեքենաների արտադրության արժեքը (միլիոն վասկի ուրբիթներով):

ԽՍՀՄ 1933 թվին (առանց Կապիտալիստական յերկիրները 1929 թ.) ¹				Գլխարկանմանը)
ՀԱՄՆ	Անզիա	Դերմանիա	Ֆրանսիա	1926/27 թ. գներով
10.000	1.700	2.100	345	8.460

Այս տվյալների համաձայն՝ մենք 1933 թվին յեմուգական-խոշոր արդյունաբերական յերկիրներից խիստ շատ առաջ ենք. անցել մեքենաների արտադրության մեջ, 1929 թ. յեղածի համեմատությամբ:

1 Այս տվյալներն հաշվարկված են հետեւյալ հիմունքով.

ՀԱՄՆ-ի համար—1929 թ. ցուցակագրությունը, հանելով արանձագարտային արդյունաբերությունը:

Դերմանիայի համար—Հերմանական մեքենայաշեն արդյունաբերության 1930 թ. վիճակագրական տեղեկատունը, եջ 59:

Անզիայի ու Ֆրանսիայի համար—այդ նույն անզեկատուն 1929 թ. համար, վերահաջարկելով արտադրության ինդեքսի ու զների փոփոխման հիմունքը:

Գյուղատնտեսական մեթենաների արտադրության
համախառն արժեքը (միլիոն վուկի ռուբլիներով)

ՀԱՄՆ	ՀԱՄՌ
1929 թ. ¹	1933 թ. ²
385	420

Գյուղատնտեսական մեթենաների արտադրության մեջ մենք անցել ենք աշխարհի առաջին կապիտալիստական յերկրից—ՀԱՄՆ-ից—նոր բարձր կունյունկտուրայի տարրաւ:

Ստորև բերված ազյոււակը ցույց է տալիս, թե 1932 թվականին խոշորագույն կապիտալիստական յերկրների պողպատի ու չուդունի արտադրությունը մինչև վոր տարին եր հետ մզված:

ՀԱՄՆ	ԴԵՐԺԱՆԻՑ
Զարգուհի	1896 թ.
Պողպատ	1896 թ.

Զարգուհի ու պողպատի արտադրությունը—արդյունաբերության արդի սիմենտի նիմեր—1932 թվին այդ յերկու խոշորագույն կապիտալիստական յերկիրներում մի ամբողջ մարդկային սերենդի կյանքին տեսական արդյունաբերությամբ ներ եր նետված: Ընդհակառակը, մեր արտադրությունն 1932 թվին մոտավորապես 50% -ով ավելի բարձր եր, բայց թե յերբեն ցարտկան նուսաստանի պատմության մեջ:

ՃԳՆԱԺ-ՀԱՄԻ ՆԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺՆՈՒՄ Ն

Հասկանալի յե, վոր արտադրության առանձին ճյուղերը անհամաշափ կերպով են բռնված ճզնաժամով: Ցեղե մենց արդյունաբերական արտադրանքի մասին յեղած տվյալները բար-

¹ Վեճակազրության տվյալների համաձայն՝ վերածած վուկի ռուբլու:

² Մեր գնահատականը կենաց ժող. անու. հաշվարչ. ավյալների հիմունք:

Հանենք արտադրության միջոցների արտադրության ու սպառամիջոցների արտադրության վրա (I ու II յենթաբաժանում Մարքսի մոտ), առա կստանանք հետևյալ պատկերը.

Կապիտալիստական աշխարհի արդյունաբերական
արտադրության ինդեքսը¹

(1928 = 100)

<i>Տ ա ր ի ն ե ր</i>	<i>Արտադրության միջոցները</i>	<i>Սպառման առարկաները</i>
1913	69,0	81,0
1929	110,0	105,0
1930	96,0	93,0
1931	82,0	91,0
1932	62,8	89,4
1933 (առաջին 6 ամիսները) .	68,3	94,9

Այս թվերի առթիվ անհրաժեշտ են նշել հետևյալը.

ա) ամբողջ 1933 թվի տվյալները հավանորեն մի փոքր ավելի ցած կլինեն, քան թե առաջին 6 ամիսներինը, բայց ավելի բարձր կլինեն, քան 1932 թվինը.

բ) մեր արտադրությունն 1932 ու 1933 թ. թ. ընթացքում մտնում ե այս տվյալների մեջ, այդ պատճեռով ել այդ յերկու տարվա ընթացքում համաշխարհային արտադրության հանդադումաբները նախ՝ ավելի նպաստավոր են դուրս գալիս և յերկրորդ՝ «Ա» ու «Բ» բաժինների միջև յեղած փոխհարաբերությունը փոխվում ե առաջնի ոգտինու Այնուամենայնիվ, այդ տվյալներն ել բավականաչափ ընորոշ են ու ցուցանշական:

¹ Գերմանական կոնյունկտուր-ինստիտուտի հանդեսի հատուկ հավելվածը, № 31 (եջ 67) 1913 ու 1933 թ. թ. Յեռամայա հաշվետվությունից, հրատարակության 8-րդ տարի, 2-րդ տետրակ, եջ 103:

Այդ տվյալներն ամենամը պարզությամբ ցույց են տալիս, վեր նզնածամի ծանրության կենտրոնը «Ա» բաժնում է: Մինչդեռ արտադրությունը «Բ» բաժնում 3^{1/2} տարվա ընթացքում (1930—1933), կոպիտ հաշվարկմամբ, մըջին հաշվով 10⁹/օ-ով ցած և 1929 թվի մակարդակից, «Ա» բաժնի մըջին անկումը այդ 3^{1/2} տարվա ընթացքում, կոպիտ հաշվարկմամբ, 34⁰/օ և կազմում 1929 թվի համեմատությամբ:

Հետեւալ աղյուսակը ցույց է տալիս արդյունաբերական արտադրության անկումն ըստ բաժինների 1932 թ. ընթացքում կարևորագույն կազմակերպություններում:

Արդյունաբերական արտադրության ինդեքսը 1932 թ.

(1928 = 100)

ՀԱՄՆ	Ֆերմանիա	Անգլիա	Անգլանդ	Ֆրանսիա	Ճապոնիա
Բաժին «Ա»	48,2	50,2	85,3	49,4	80,0
Բաժին «Բ»	81,8	77,7	90,5	61,6	64,0

Արտադրության միջոցների արտադրության անկումն ամենից ավելի ուժեղ է ՀԱՄՆ-ում ու Գերմանիայում, այն յերկու յերկիրաներում, վորոտեղ մինչեւ ճգնաժամը ռացիոնալացման կապակցությամբ ամենից ավելի մեծ չափով ընդլայնված ու արդիականացրած եր արդյունաբերության արտադրական ապարատը (Անգլանդի համար մեծ զեր և կատարում կազմակերպությունը, կապիտալի ներմուծման դադարումը), Ֆրանսիան ամրող ճշնաժամի ընթացքում բացառիկ դիրք և գրավում. Ֆրանսիայում անկումը «Ա» բաժնում ամրող ժամանակն ավելի քիչ և յեղելքան թե «Բ» բաժնում. Դրա ամենազլինավոր պատճառները հետեւվյալներն են. ռացիոնալացումը ճգնաժամից առաջ ավելի ուշ և սկզբել ու ավելի փոքր ծավալով իրականացվել. ճգնաժամի շրջանում մեծ ամրություններ կառուցվեցին, նավահանգիստներ ու ջրանցքներ շինվեցին. «Բ» բաժնում նշանակալից կշիռ ունի պերճանքի առարկաների արտադրությունը, վորը հատկապես մեծապես

վաստից ճգնաժամը հետևանքով, Անգլիայում արտադրության անկումը ընդհանրապես ավելի պակաս է, վորովնետեւ արտադրությանն արգեն իրբեն հիմք վերցրած 1928 թվին շատ ցած մակարդակի վրա յեր դանդում Շապոնիայի հարցը մենք առանձին կը ոչ փեխք ստորև:

Արտադրության այս սաստիկ անկումը կապիտալիստական յերկիրների արտադրական ապարատի շափած թերաքինման համցրեց, ոյն ապարատի, վորը նզնամամից առաջ կ եա նեռու յետ ամբարդուրյամբ բնանված լինելուց Շնդանուր հաշվարկումներ ամբողջ կապիտալիստական աշխարհի համար բացակատում են: Բնընք սահմանձին բնորոշ որինակները:

Դիմանիայի վերաբերմամբ, Կոնյունկուրի հատիտումը հաշվարկում է իսկապես բանած աշխատաժամերի ամսական տոկոսը սարքավորման լիակատար ոգտագործման համամատությամբ. Ելակատար ոգտագործումն ասելով նկատի յետ առնվում բար ավատակերի բնանվածուրյունը շարաթական 48 ժամվա ընթացքում մեկ հերթի:

Արդյունաբերության արտադրական կարողության ոգտագործման տոկոսը Գերմանիայում¹

1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
67,4	56,2	44,5	35,7

Յիթե մենք այս թվերը վերահաշվարկենք՝ համապատասխանեցնելով արտադրական կարուրայան լիակատար ոգտագործման մեր հասկացողության մեջ (որտեղան յերեք հերթ 7-ական ժամով, 7-որյա շարաթում՝ 147 ժամ), ապա կստացվի հետեւյլ պատկերը.

Արդյունաբերության արտադրական կարողության ոգտագործման տոկոսը Գերմանիայում²

(Արակատար ոգտագործման մեր հասկացողության հիման վրա)			
1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.
20,6	16,8	13,6	10,9

¹ «Ծեռամբայաց հայկական թյուն», հրատարակության 7-ըդ տարի, 2-ըդ տետրակի բաժին «Բ3, էջ 219».

² «Ծեռամբայաց հայկական թյուն», հրատարակության 8-ըդ տարի, էջ 121.

Մենք տեսնում ենք, վոր նույնիսկ 1929 թվին Գերմանիայի արդյունաբերական արտադրական ազգարատը մեր մասաբներով սգտագրծված եր մեկ հիմքերաշղական մասով: Այլ կերպ ասած՝ խորհրդային ռեժիմի ժամանակ Գերմանիայի արդյունաբերական արտադրությունը տոկա յեղած սարժավորմամբ կարելի կլիներ ճինք անցամ ավելացնել 1929 թ. նամեմատուրյամբ — բարձր կույունքուրայի տարվա — և տան անցամ 1932 թ. համեմատությամբ (առանց հաջողի առնելու հետագա բարձրացման հասարակորությունները՝ աշխատանքի մեթոդների բարեկազման, ողանային տնտեսության շնորհիվ և այլն): Նույն վիճակի մեջ և զործը նաև մյուս արդյունաբերական յերկիրներում:

ՀԱՄԱ-ի պողպատաձուլական արդյունաբերությունը

	Տարեկան միլիոն տոններով	Արտադրական կարգության տոկոսներով
Արտադրական կարողությունը ¹ («Ժերմար» տոններով 66,07)	67,12 (1 մ=1000 կգ)	—
Արտադրությունն 1929 թ.	55,19	82
Արտադրությունն 1932 թ.	18,81	20

Անզիայի բամբակագործական արդյունաբերությունը 1932 թվին

Դրված ինիկների թիվը	51,9 միլիոն
Աշխատագ ինիկները	39,9 Ճ
Միջին աշխատաշաբաթը (առավելագույն):	35 ժամ
Ժամերի քանակությունը շաբաթը մեջ (միլիոններով) 1.600	
Արտադրական կարողությունն լիսկատար ողագործման մեջ հանկացողության դեղուում ($147 \times 51,9 = 7.630$)	7.630
Կարողության ողագործման 0/0-ը	18

¹ «Սարգես» սմբ Կարմենու Բիզնեսս (Հայացիկ տնտեսական տեսություն), տարեկան համելված 1932 թ. էջ 296, 1931 թվին աբասալլական կարողությունը ել ավելի յիշ բարձրացել միքանի ողամենների կառուցումը վերջացնելու հետևանքով և հավանաբեն, հասել եղ 70 միլիոն տոններ:

Անգլիական տեխնի արդյունաբերության առկա սարքավորման լիակատար ոգտագործման դեպքում կարելի կլիներ այժման համար աշխատավային պահանջմունքից մեկուկես անգամ ավելի բարյակացործական ապրանք արտադրել:

Այս պարմաններում, առկա արտադրական ապարատը նվազագույն չափով ողտագործելիս, հասկանալի յե, վոր ճնշաժամի պահին, այն բանից հետո, յերբ ավարտված եր բարձր կոնյունկուրայի շրջանում սկսված նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը, խոշոր կապիտալիստական յերկիրներում վահանական միացն տեղի չեր ունենում հաստատուն կապիտալի ընդլայնում, այլև արտադրության միջոցների արտադրությունը մինչև անգամ ընթացիկ բնական մասվածքը չեր ծածկում: Այս բանն ընդունեցին բուրժուական հեղինակություններն արդեն 1931 թ. մարտի 19-ի շաբաթական հաշվետվությունը (1932 թ. մարտի 19-ի շաբաթական հաշվետվություն) գրում եւ:

«1931 թվին զերմանական ժողովրդական տնտեսության ամբողջ սիսեմում առկա սարքավարման կրնաւման չափեր՝ ընթացիկ մասվածքի ու ննանալու նետառներ՝ ըստ յերկուրին զերազանցում եղին սարքավարման փոխարինման նամար ներդրած ու հատուկին կատարող նոր ներդրումների գումարից: Այլ խոսքերով — գերմանական ժողովրդական տնտեսությունը 1931 թվին արդեն իր հիմնական կապիտալն եր խսորում»:

Ամերիկյան պողպատի արեստի («Յունայտեդ Ստիլ Կորպորացիոն») 1931 թ. տարեկան տեղեկագրի մեջ ասվում եւ:

«Պողպատի միջին տարեկան արտադրությունը 10 տարվա ընթացքում, սկսած 1922 թվից մինչև 1931 թիվը, կաղմում եր 43 միլիոն տոնն 1931 թ. 26 միլիոն տոննի համեմատությամբ: Ըստ յերկուրին, նիւթ և այն յենթադրությունը, թե՝ յենելով պողպատե շինվածքների միջին սպառումից վերջին 10 տարիների ընթացքում ՀԱՄՆ ում, ներթին ըսկայի պահանջը՝ ձեռնարկությունները պահպանելու ու միմայն ընթացիկ մասսմբ վերտկանգնելու համար, առանց զարգացման ու ընդացնման, տնների տա ավելի մեծ հանկարչություն եր պահանջում, քան թե պատաված եւ 1931 թվին»:

Ամերիկյան 1932 թվին պողպատի արտադրությունը ՀԱՄՆում

ընկավ զրեթե մինչև 1931 թ. մակարդա՛յի կեսը ոյստեղից պարզ է, վոր արտադրությունը հեռու յեր ընթացիկ մաշվածքը ձաձկելուց:

Ն գնաժամը հասցրեց այնուեղ, վոր բավական խօսր չափով վշջացրին սարգալումը իմակերիալիստական յերկիրներում, հասկապես արդյունաբերության ո՞նչն ոճուդիրում:

Դրված բամբակագործական իլիկեների թիվը (միլիոն հասերով)

	1929 թ. հունիսի 31-ին	1933 թ. հունիսի 31-ին	Ըստ բացում
Կապիտալիստական աշխարհ	156,7	149,2	— 7,5
այդ թվում Անգլիա	55,9	50,2	— 5,7
» » ՀԱՄԱ	34,8	31,3	— 3,5
» » Ֆրանսիա	11,2	9,8	— 1,4
ԱՀԱ			
Խորհրդական միունիոն	7,5	9,2	+ 1,7

Իլիկների թվի տնօւմ ճգնաժամի ընթացքում նկատվում եր նաև ճապոնիայում, Չինաստանում, Հոգկանանում ու այլ գաղութային յերկիրներում: Շարունակվում է բամբակագործական արդյունաբերության տևականաւորյան սրցմաս հին արդյունաբերական յերկիրներից դեպի սպառող յերկիրները: Շատ դեպքերում Անգլիայում ամրագլ գործարաններ տեղահան արվեցին ու փոխադրվեցին Յափական կամ Չինաստան Անգլիայում դոյլություն ունի տեքստիլ արդյունաբերությունն տառպղծացնելու արևածագության՝ ևս 10 միլիոն իլիկ դործածությունից հանելու միջոցով: Մնացած գործարաններն իրենց իլիկների քանակության համեմատականությունը պետք է վրառ դումաք վճարեն՝ դործածությունից հանեմ իլիկների գումարատուցման համար:

Այս պայմաններում մեմնածեն արդյունաբերության արտադրությունը, ընտեկանաբար, շատ անհաման եր:

Մեմբենահեն արդյունաբերության ինդեքս
(1928 = 100)¹

Տարիներ	Դեբմանիս	Ցրտանիս	Առ զլիս
1929	100,9	115,8	107,0
1930	83,1	115,8	103,1
1931	59,1	98,6	88,9
1932	38,4	63,6	78,3
1933 (առաջին 6—8 ամիսներ)	38,2	78,1	82,5

Նոր մեքենաներ զնելուց խուսափելու համար՝ կազմիտավեսական խոչըն արդյունաբերությունը զործադրում է նույն մեթոդները, վորոնք մեղ մոտ սովորական եյին ռազմական կոմունիլմէ շրջանում՝ մեքենաների պահանության պատճառով՝ շինուալիան ճարտարագետների միությանը հանդիսը զրում է²:

«Ներջին կըս արդիս ընթացքում հաստոցների պատվերները ֆիբրմանիայում առանձնակի յերեսույթ են դարձել Նրանք բղխում եյին բացառապես մանր ու միջին ֆիբրմաներից։ Ընդհակառակը, խոչըն ձեռնարկություններն ու կոնցերնները, վորքան վոր խոռքը վերաբերում եր արտադրական սարքավորմանը, դադարեցրին իրենց գնումները։ Սաւ կարիքը նրանք նոզում են գործարանների ավելի միշ զբարյած ցեխերում յեղած առկա մեմբենաներով։

Ճշնաժամը ճայրահեղ չափով կրճատեց նոր գործարանների կառուցանը (բացառությամբ ուղարկական արդյունաբերության), իրեն որին առ մատնանշենք ՀԱՄՆ-ի վերաբերյալ տվյալները։

¹ «Բնակչութեան Մանայումը դը Ստատիստիկ» (Ազգերի լիգայի՝ Վիճակության և մասական ըցուցեան), 1933 թ. սեպտեմբեր, եջ 348։ ՀԱՄՆ-ի համար մեցենաշեն արդյունաբերության ընդհանուր ինդեքս չկա:

² «Գերմանական ճարտարագետների միության» «Գերմանական հաստարացուացեցական» հանդիսա, և մարտի 1933 թ., Ենիքնդի հովկածը։

Գործարանային շինարարության արժեքը ՀԱՄՆ-ում¹

<i>Միջին ամսական տվյալները (միլիոն դոլարներով)</i>				
<i>1928 թ.</i>	<i>1929 թ.</i>	<i>1930 թ.</i>	<i>1931 թ.</i>	<i>1932 թ.</i>
42,4	45,5	21,4	9,7	3,6

Ինչպես տեսնում ենք, նոր գործարանների կառուցման համար 1932 թվին ՀԱՄՆ-ում ծախսված գումարը կազմում է 1929 թ. նամակատավան գումարի ընդամենը $8\frac{1}{2}$ -ը: Նույնին և իրենի դրամբյունը նաև մյուս կապիտալիստական յերկիրներում:

Վերջապես շինարարությունն ընդհանրապես չափազանց պակասել և ճգնաժամի ընթացքում:

Շինարարություն

	<i>1929 թ.</i>	<i>1930 թ.</i>	<i>1931 թ.</i>	<i>1932 թ.</i>	<i>1933 թ. (առաջնա- մայիսը)</i>
	<i>ՀՀՆ Տ-10 ամիսը</i>				
Անդիմ² (1924 թ.=100)					
Շինարարություն թույլավություն- ներ					
Բնակչություններ . . .	117,5	124,1	107,5	124,4	166,0
Արդյունաբեր- կան շենքեր . . .	140,5	185,7	109,8	94,4	107,0
ՀԱՄՆ³ (ամսական միջին տվյալներ)					
Շինարարական պորտանազգեր (միլիոն դոլարնե- ներով)	479,5	376,9	259,2	112,6	63,0

¹ «Սարգիս ով Կարբենա Բիզնես», 1932 թ. առընկան հավելված, էջ 32: «Ֆեղերալ Ռեզերվ Բյուլետեն», էջ 591: Տվյալները մեջ են ըերբում շինարարության արժեքն առանց մեքենական սարքավորման:

² Կոնյունկուր-ինստիտուտի «Յեռամօյա աեզեկուտիվ», հաստարակա-թյան 8-րդ տարի, 2 տետրակ 1930, 1931, 1932, 1933 թ. թ. Նույնը, հրա-7-րդ տարի, 1929 թ., էջ 52:

³ «Սարգիս ով Կարբենա Բիզնես», 1929, 1930, 1931 թ. թ. առընկան հավելված, էջ 30—31: 1933 թ. համար «Ֆեղերալ Ռեզերվ Բյուլետեն» 1933 թ. սպոստառ, էջ 528: 1933 թ. համար—«Սարգիս ով Կարբենա Բիզնես» 1933 թ.:

	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	առաջին 8—10 ամիսը
Դերձուկիւն (առաջական մի- շին տվյալներ) ¹					
Երևաքարության թաշխավաթյուն- ներ (հազար խո- րոնորդ մինչքնե- րով)					
Բնակչություններ . . .	12 121,0	10 483,0	4 819,0	3 300,0	3 418,0
Արդյունաբերու- թյան շենքեր . . .	783,5	983,0	487,0	272,0	273,0

Նաևույրների ստատիկ նվազաւմը ճգնաժամի ընթացքում և
սակայն գառառնությունը ապագա շահույթների վերաբերմամբ՝
իրենց արագանայտությունն ան զանում ակցիաների կուրսի ստա-
տիկ անկախ մեջ:

Արդյունաբերական ակցիաների կուրսի ինդեքսը²

Տարիներ	ՀԱՄՄՆ	Առա- փա- փա- փա- փա-	Ֆրանկ- ներ	Լեհա- ստան	Առաջնական	
1929 . . .	189	189	525	126	66,2	—
1930 . . .	141	112	444	101	47	75
1931 . . .	87	87	305	76	27	76
1932 . . .	43	84	247	51	19	104
1933 (առաջին 9—11 ամիսներ) . . .	72 ³	99	238	65	20	170 ⁴

Այս թվերը դուգադրել չեն կազելի, վորովնեան նրանց յեղա-
կետը տարրեր եւ Ամեն մի տառնձին յերկրի համար (բացի ճա-
պոնիայից) երանեցույց են տալիս 40—70 % անկում:

¹ Գերմանիան 85 քաղաքների համար 1929 թվին ու 96 քաղաքների
համար 1930—1931 թ. թ.

² Գերմանիայի վերաբերյալ տվյալները միքանի անկամ՝ փոխվել են և սա-
կադ գառառնությունն ան ներշնչաւմ:

³ «Ազգերի լիգայի տօմսեկան բյուլետեն», 1933 թ. Ա. 10, էջ 429.

⁴ Կուրսի ինֆլյացիոն բարձրացում:

Վարդային ճղուածամբ, շահույթների նվազումն ու ակցիաների կուրսի անկումը կապիտալների և միասիայի նշանակալից նվազման հասցըին (բացի ճաղոնիայից):

Կապիտալների և միասնական առաջնորդություն (միլիոններով)¹

Առաջնորդ միջին ավագներ

Տարիներ	ՀԱՄՆ (դուչար- ներով)	Անգլիա (ֆունտ առարկինք ներով)	Ֆրանսիա (ֆրանկ- ներով)	Գերմա- նիա (մար- կերով)	Ինդո- նենա- սան (դո- մինե- րով)	Ճապոնիա (ինդոնե- զան)
1929 . . .	849	21	1259	80	21	222
1930 . . .	585	20	1823	47	19	205
1931 . . .	260	7	1362	65	7	261
1932 . . .	99	9	511	12	12	818
1933 (առաջին 9—11 ամիսներ)	57	11	312	9	2	544

ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԴՆԱԺԱՄՄԻ ԵՐՋԱՆՈՒՄ

Պատրաստի շինվածքների պաշարների վիճակարությունը, վոր կարելի լիներ ոգտագործելը վոչ մի յերկրում չկա, բացառությամբ ՀԱՄՆի:

Պատրաստի շինվածքների պաշարների ինդեքսն ՀԱՄՆում
(1923—1925 = 100)²

	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.
Դեկտեմբեր	119	120	108	96	108

(ողառափառ)

Մենք առնում ենք, վոր պատրաստի շինվածքների պաշարները 1931—1932 թ. թ. ստուգի պակասել ու 1923—1925 թ. թ. մակարդակից ավելի ցած են ընկելը Այս եր արտադրության բուն վիրելքի պատճառներից մեկը 1933 թ. ավելին—հուլիսին, յերբ պաշարները նորից լրացվեցին լրադիրների աշխատավորություններով՝ պատրաստի շինվածքների պաշարները մանրավաճառ ու

¹ «Ազգերի միավոր առանձին քառութեան», 1933 թ., № 12, էջ 326.

² «Սարգես ով Կաբընա Բիզնես-ի պաշտանական ավագները, պահանջման համարներ»:

մեծածախ տուերի մեջ ու գործարաններում ճշնաժամի ընթացքում ստամիկ կրնաւազնել են նաև ուրիշ յերկիրներում։ Այլ կերպ լինել չեր ել կարող է Յերբ զներն անընդհատ ընկնում են, յուրաքանչյուր կապիտալիստ ձգուում և վորքան կարելի յեր քիչ պաշտ ուղանել, զորպեսզի ըստ կարելույն քիչ կորուստ ունենա զների անկման դեպքում։

Հումի ու գյուղատնտեսական մասայական ապրանքների պաշտետը

	1929 թ. հոկտեմ- բեր ¹	1930 թ. հոկտեմ- բեր ²	1931 թ. հոկտեմ- բեր ³	1932 թ. հոկտեմ- բեր ⁴	1933 թ. հոկտեմ- բեր ⁵
Առերիկական բաժնուկ (հազար հակերտ) . . .	3 688	5 967	9.165	11.788	10.145
Ցորքն (միլիոն բաշերեն- բազ) . . .	462	544	486	455	430 ^m
Շաբար (հազար տաններով)	2 530	3.165	6 811	7.318	6.971 ^m
Քեյ (միլիոն դնակերտ)	202	222	195	219	235
Սուրճ (միլիոն պարկերով)	21.1	29.3	34	31.5 ^e	22.3
Կառ չուկ (հազար տաններ- բազ) . . .	391	483	570	622	620 ^m
Անող (հազար տաններով)	31.6	47.5	61.9	58.6	84.5
Հ առար (ՀԱՄՆՀ հազար տաններով) .	57.8	65.8	119	153	148 ^m
Ցինկ (հազար տաններով)	51	131	138	127	94
Նազթ (միլիոն բատմեն- բազ) . . .	628	613	557	549	550 ^m

Այլ և խնդիրը զլուղատնութական ու հանածո հումքի պաշտըների վերաբերմամբ ճշնաժամի սկզբից այսունդ դեռ գրեթե վոչ մի կընատում տեղի չի ունեցել։

1 Վեհագուն ՀՀ քերիչ նկանամիկ Սերգիոս, 1931 թ. հունվարի յեռամ-այականին հաջորդած։

2 Մայիս, 1931 թ. հոկտեմբերի յեռամայակին հաջորդած։

3 Մայիս, 1933 թ. հոկտեմբերի յեռամայակին հաջորդած։

4 1933 թ. սեպտեմբեր։

5 1932 թ. հուլիս։

6 1929 թ. գնդամբեր։

Նախորդ աղյուսակի մեջ մենք տալիս ենք համաշխարհայիշն պաշտպաների ամփոփումը «Հռոնդոն ենդ Թեմբրիջ Ակոնոմիկ Սերվիսաշխատ» տվյալներով, մի հիմնարկություն, վոր տահնամնե հեղինակություն և վայելում բուրժուական դիտություն մեջ:

Մենք տեսնում ենք, վոր վերջին տարիների ընթացքում պաշտպաներն ընդհանուր առմամբ արդեն չեն անեն Բայց նրանք դեռ շատ մեծ են և ձնշում են զործ գնում գների վրա (սուրճի վերաբերմամբ պաշտպաների նվազումը սիստեմատիկ մասսայական վոչնչացման հետեւնք և հանդիսանում),

ԴՆԵՐԻ ԱՆԿՈՌՄԸ ՀԴՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԻ

Ծղնաժամի ժամանակ տեղի յիր ունենում զների շատ ավելի սատօնի անկում, քան յերբեք նախորդ ճղնաժամերի ժամանակ (բացառությամբ 1920—1921 թ. թ. հզնաժամի): Դների այդ ամենը ուժեղ անկման պատճառը վո՞չ միայն ճղնաժամի սրություննե, այլ նաև հետեւյալը:

Պատերազմի ժամանակ ուղրանքների պահանջարկն այնքան ուժեղ կերպով ու մշտապես զերպանցում եր առաջարկից, վոր համարյա բոլոր առքանքների զները նրանց արժեքից նշանակալից չափով ազելի աճեցին Դները վոսկու նաւազով 1913 թ. համեմատությամբ ավելի քան յիրկու անգամ բարձրացան 1920—1921 թ. թ. հզնաժամի ընթացքում գների այդ ուսիցումը լիկ վիդացիայի յենթարկվեց միմիայն կիսով չափ, վորից հետո գների կայունացում տեղի ունեցավ այդ դեռևս շատ բարձր մտկարդակի վրա: Ցերե 1913 թ. ընդունենք 100, ապա գների ինունքով վոսկով 1922—1929 թ.թ. տատանվում եր 150-ի շուրջը վոր գները մոտավորապես նախապատճառամյան մակարդակից ավելի ցած չընկան, զրա պատճառը վոսկու արժեքի անկումը չե, վորովհետև վոչ մի տեխնիկական նորմություն չի յեղել, վոր զգալի չափով իջեցներ վոսկու էշոային միավորի մեջ առարկայացված աշխատաժամանակը: Դրա պատճառը, մեր կարծիքով, այն եւ վոր արտադրության ծախքերի խիստ կարեոր տարբերը—վարձակալությունը, ոենտան, փոխադրածախքը, ծառայոների պահպանումը,

Հարկերը և այլն—վորոշ մակարդակի վրա ամրացված եյին յերկարաժամկետ պայմանագրերով կամ պետական կարդաղը ուժունեցը:

Կարիք յեղազ մի յերկրորդ ծանր աղնաժամկետի, վորպեսդի այդ կաշանդող պայմանները խորտակվեն ու դներն հարմարեցվեն առարկանը բների արժեքին, վորն անկասկած իջել եր նախապատերակում յան ժամանակի համեմատությամբ (աշխատանքի արտադրությանության բարձրացման հետեւանքով):

Մեծածախ զների ինդեքսը (միջին տարեկան) 1913=100¹

Տարիներ	Դերմանիա	Ֆրանկիա (Վանկիներով)	Անգլիա և Արևմտյան Բնագերս	ՀԱՄՆ	Շվեյցարիա
1929 . . .	137	127	127	137	163
1930 . . .	125	113	107	124	137
1931 . . .	111	102	89 ²	105	116
1932 . . .	97	87	86	93	122 ³
1939/առաջին 9 ամիս- ներ)	92	81	87	92 ⁴	136

Այս ինդեքսները չի կարելի դուզադրել միմյանց հետ, վորով հետեւ նըանց համար հիմք են ծառայում տարրեր ապրանքների թույց զների մակարդակի տարմակը նրանք հիմնականում արտացոլում են (բացի ֆապոնիայից, վորտեղ ուժեղ կերպով յերկան և գալիս զների ինֆլյացիոն բարձրացումը):

Գների անկումը տօկոսներով 1929 թվից մինչեւ 1933 թ.

Դերմանիա	Ֆրանկիա	Անգլիա	ՀԱՄՆ
33	86	81	33

Մուտավորապես նույն տոկոսով գներն ընկել են այն ըուոր յերկիրներում, վորտեղ վալյուտայի զգալի արժեքադրկում տեղի:

1 «Եղերտի լեզոյի տօկոսան բյուլետեն», 1933 թ. № 10.

2 Ինֆլյացիա, մկան 1931 թվից:

3 Ինֆլյացիա, մկան 1933 թ. մարտից:

4 Ինֆլյացիա, մկան 1931 թ. վերջից:

չի ունեցել Գների անկումը բարձրագույն կետից դեպի զածրագույնը և ավելի յէ. այդ տվյալները մենք կրնենք ստորև, ճշդուաժամկերդ դիմանակը:

Այս միջին տվյալներն, իհարկե, դների անկումն հակառակն անհավատրաչափություն են թաղցնում ապրանքների ստուածին տեսակների վերաբերմաժը: Տվյալները մերակ մասին մենք տալիս ենք ստորև:

ՄՈՒՌՊՈԼ ԳՆԵՐՆ ՈՒ «ԱԶԲԱՏ ԳՆԵՐԻ»

Խոշոր մոնոպոլիաներին հաջողվեց իրենց ապրանքների վաճառքի դները համեմատաբար բարձր մակարդակի վրա տանել և, ընդհակառակը, իջեցնել առքի դներն ոյն ապրանքների, վոր նրանք դնեռւմ են մոնոպոլիստական կազմակերպությունների մնջ չկազմուկերպված մանր արտադրողներից (դուզացիներից, արհեստավորներից, մանր տրյուլնարերողներից): Մի քանի յերկիրներում հաշվարկված և տկարտելային գներից ինչքանը «տպատ» դների ինքեքսի համեմատալիքամբ Ստացվում է հետեւյալ պատկերը.

Կարտելային գները յև ազատ գները

Տ-ՔԴՀԵՐ	Գերմանիա ¹ 1926 թ.=100		Ավստրիա ² 1928-1931 թ.թ.=100		ՀՀՀԱՄԱՆ ³ 1926 թ.=100	
	Կարտելային գներ	Ազատ գներ	Կարտելային գներ	Ազատ գներ	Կարտելային գներ	Ազատ գներ
1928	102,1	106,8	—	—	—	—
1929	105,0	97,4	99	100	107,7	98,6
1930	103,1	79,7	96	87	108,9	80,9
1931	98,6	60,8	91	76	107,8	63,8
1932	88,9	47,5	98	73	106,1	52,5
1933 ⁴	88,9	48,3	94	73	94,8	48,8

¹ 1933թ. Կոնյունկտուր-միմուկացական անդեկտուր, եջ 121, բառց. 1933 թ.

² Ավստրիական կոնյունկտուր-ինստիտուտի տեսական անդեկտուրներ:

³ ՀՀՀԱՄԱՆ անտեսազման թնականառն ամսական պիտույքագրական առյուծակերը:

⁴ 1933 թ. = 10 ամիս Գերմանիայի համար, 12 ամիս Ավստրիայի համար և 11 ամիս ՀՀՀԱՄԱՆի համար:

Ընդհանուր տռմամբ մոնոպոլիսաներին հաջողվնց մազմացնել գների անկումն իր ապրանքների նկատմամբ Բայց այդ առթիվ մեծ անհամաշափություն և յերեան զայիս Պղնձի միջազգային կարելիք հարկադրված յեղավ իջեցնել գները ֆնտին 24 ամերիկյան ցենտից մինչև 8, իսկ ապա բոլորութին լուծվեց: Այս բռաբեցիս ողինձն արժեք վոչ ավելի, քան 4—5 վուկի ցենտ փունտը: Մասն արդյունաբերության մոնոպոլիաները ՀԱՄՆ-ում, Գերմանիայում և Ֆրանսիայում, բնակառական գրեթե բոլորութին չի-չեցրին ներքին գները (Սակայն անհամաժետ և նշել, վոր կարուելների առանձին մասնակիցները շատ հաճախ զաղանի կերպով վաճառում են պաշտանական գներից ցած):

Սարք թիրած թվերը ցույց են առաջիւ վոր մոնոպոլիսական կառուտալլը ճշնաժամի ժամանակ լայն կերպով սպասարձնել և իր դերադանցությունը գուղութային յերկիրների նկատմամբ՝ անհամարժեք վախճանելու թյունն ուժեղացնելու համար:

Գաղութային ապրանքների ու իմպերիալիստական յերկիրների ապրանքների գների ինդեքսը (1913 թ.=100)

Տարիներ	ՀԱՄՆ	Գերման	Անգ-	ՀԱՄՆ	Անգ-	Գողութային ապրանքներ		
	նիտ	միտ	լիո	նիտ	միտ	Զուտ	(Լուգան)	Ցեղեղ-նամաքը (Երևան-Յորի)
1920	136	157	132	125	122	114	102	71
1930	127	150	126	123	120	74	69	53
1931	111	186	110	113	114	59	54	48
1932	101	119	100	102	113	65	52	38
1933 (պատմա)	106	113	117	112	118	67	52	54

Գողութային արդյունքների գների իջեցումը ստատիկ պահպանը զաղությների գնազական կարողությունը արդյունաբերութան ապրանքների վերաբերմամբ: Այս բանն, ինչպես նաև աղբարային ճշնաժամն ընդհանրապես, պետք է աղղեցություն գործեր արդյունաբերական մշնաժամի վրա, ստատիկ խոշացնելով այն:

ՎԱՐԿԱՅԻՆ ԾԴՆԱԺԱՄԸ

Դների սաստիկ անկումը և վաճառահանման բացակայությունը գերարտադրված տպրանքների համար՝ հասցրին, ինչպես և տմեն մի այլ ճզնաժամի դեպքում, վարկային ճզնաժամի ու մասսայական անանկության Արդի ճզնաժամի առանձնահատկությունը հետեւյալն ե.

ա) Վարկային ճզնաժամը, վորը թագնված վիճակում դուռը թյուն ուներ արդյունաբերական ճզնաժամի հենց սկզբից. 2—3 տարվա ուշացումով սկսվեց—Գերմանիայում 1931 թ. ամսանը, ՀԱՄՆ-ում միայն 1933 թ. մարտին, յերբ այն բռնկվեց կատարարութիկ կերպով. Բանկային ու առյօնաբերական կապիտալի սերտանման յիշ ֆինանսական կապիտալի զարգացման չափաղանց բարձր աստիճանը խուզր բանկերին նարկադրության լաւելու բարձր միջոցները, վարպետի նորու իրենց խելք տանը կարելի լինի կանոնի վարկային նպնաժամի բացանայց կերպով յերեվան գործ, նպնաժամ, վար նենց նարեց համար կառող եր վերին աստիճանի. վեանգամից դռանմալ, ինչպես այդ ցայց տվեց գերմանական բոլոր խոշոր բանկերի խորակումը Բայց վորքան ավելի յեր հապաղում վարկային ճզնաժամի յերեան զալը, այնքան ավելի այն կատարարութիկ մեներ եր ընդունում. Խնչուն հայտնի յի, 1933 թ. մարտին ՀԱՄՆ-ում հարկ յեղադ փակել բռլոր վարկային հիմնարկները:

բ) Վճռական դեր եր խաղում գների հակայական անկումը, վորը պարտերի ուսալ բեռը նպնաժամի ժամանակ ավելացնելու եր 35—40 %₀-ով:

Դների անկումը նշանակում է հակայական տեղաշարժ յեկառմուների ուսալ բաշխման մեջ հողուտ վարկատուների (ռանտյեների) ի վեաս պարտապանների (արդյունաբերողներ, գուռդաշիներ, անաստերեր, արհեստավորներ), Ռւբիշ կերպ տառել միոխավական կապիտալն իր բռլոր մեներով պետք ե ստանար շահույթի տռանց այն ել ճզնաժամի կառակալությամբ սահանիկ պակասամբ ամբողջ զաւմարից միենույն զռւմարը տոկուներով ու ամորտիվացիայով, ինչպես առաջ Յերկարան ժամանակով այդ բանն անեկարելի յերս Յերեաց, վոր յերեք յելք կա.

- 1) Պարտերի տարեային վօնացումը սնանկության միջոցով.
 2) Վայրաւայի արժեգրելումը, վորք պարտերի իրական բնար ինամապատճաննեցներ զնիրի ընկած մակարդակին.
 3) Թէ՛ արտաքին և թէ՛ ներքին պարտերի՝ պետուրյան կողմից որբազօծված վնարումը:

Սնանկուրյուններ

	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.
ՄԻԱՅՅՈՅ, ԿԱԼԱԿԱԴԱՆՅՈՒՆ ¹					
Ակցիաներական ընկերությունների թիվը . . .	22.909	26.355	29.283	31.822	17.732
Նրանց պատուիվը (միլիոն գումարներով) . . .	483.3	668.3	786.7	928.4	419.7
Բանկերի թիվը . . .	642	1.345	2.298	1.453	— ⁴
Նրանց պատուիվը (միլիոն գումարներով) . . .	234.5	864.7	1.691.5	715.6	— ⁴
ԱՆԴՐԱԾԱՀ ԱԽԵ, ԱԽԵ.Ս ²					
Ախանձությունների թիվը	5.909 ¹	6.287	6.818	7.821	4.927
Միլիոն ֆունտ առողջնորդներ					
ներ	— ⁴	15.1	16.5	16.4	— ⁴
ՀԱՐՄԱԿԱԴԱՆՅՈՒՆ ³					
Հայտարարված սնանկություններ	9.846	15.486	19.254	13.966	8.718
ՀԱՐՄԱԿԱԴԱՆՅՈՒՆ ⁴					
Հայտարարված սնանկություններ	6.092	6.249	7.220	9.014	8.362
ՀԱՀԱՅԱՏԱԿԱՆ ⁵					
Հայտարարված սնանկություններ	516	815	753	545	259
Բազուգարված մուրհակներ	1.255	1.366	1.528	838	852

¹ ՀԱՄԵՆ-ի վերաբերմամբ—9 ամիս, Անդրախյի վերաբերմամբ—3 յեռամսյակ, Դերմանիսյի վերաբերմամբ—11 ամիս, Ֆրանսիայի վերաբերմամբ—11 ամիս, Հենաստանի վերաբերմամբ—10 ամիս 1933 թ.

² «Առևտության միջազգային ինստիտուտի նյութեր», 1933 թ. Հոկտեմբերի 20, էջ 1177/70:

³ «Անդրախյան բանկերի միջազգային ախտոթյուն» 1933 թ. Հոկտեմբերի, էջ 119:

⁴ Տվյալներ լկան:

Բայց մենք պետք ե ընդդժենք, զոր այս վիճակագրությունը վոչ մի դեպքում սնանկությունների ճիշտ պատկերը չի տալիս: Վարկային ճգնաժամի բռնկման գոտանդն ի նկատի ունենալով՝ տասնյակ հաղարավոր ձեռնարկություններ ըրուժվեցին: Խոշոր բանկերի ու պետության ոգնությամբ, և այսպիսով՝ բացահայտ սնանկությունից խուսափեցին:

Վարկային ճգնաժամի սրությունն յերեան և դալիս նաև նրա մնջ, զոր ֆինանսական կապիտալի շատ հրամանատարական բարձունքներ խորածակվեցին (Դարմշտադտի բանկը, Դրեզդենի բանկը — Դերմանիայում, Շերեգիտա Անշտատը — Վիեննայում, Կրեյդերի կոնցերնը, Շնուռ Կոնցերնը — ՀԱՄՆ-ում և այլն):

ՎԱԼՅՈՒՏԱՆԵՐԻ ԱՐԺԵՋՐԿՈՒՄԸ

Դնդյացի ալիքի ընդհանուր տնտեսական հիմքը հանդիսանում է այն վաստար, զոր արտաքին ուներքին պարագերի բևեռը զների սաստիկ անկման հետեանքով անտանելի յեր զարձել: Անմիջական պատճուները առանձին յերկիրներում առարքեր եյին: Ազգարային յերկիրներում, զորոնք սոտրերկրյա պետությունների պարտապաններն եյին, ներգործում եր վճարային բարանսի պասսիվությունը իրեն զյուղատնտեսական արդյունքների զների սաստիկ անկման հետեանք: Այս յերկիրներում արտածման ամենը ցուկներն այլևս չեյին ծածկում արտաքին պացագերի տոկութերըն ու ամորտիզացիան: Անզիւյում ներգործում եյին վճարաբարանսի ժամանակավոր պասսիվությունը և վոսկու սաստիկ արտահոսումը շնորհիվ այն հանդամանքի, զոր հանկարծ դուրս քաշեցին կոնդոնում տեղավորված կարճաժամկեա սոտրերկրյա կադիատըների մի նշանակալից մասը: ՀԱՄՆ-ում՝ վայրուտն արժեկանիւրու պետական զիտակցական միջոցառումները, զների մակարդակը բարձրացնելու նպատակով՝ ակտիվ վճարաբարանսի միջուցին: Մըա զրա մենք դեռ կանդ կառնենք հետազոտման մեջ:

Կողիտ կերպով ասելով՝ ինֆլյացիան անշատ յերեք ալիքով: Առաջին ալիքը ինֆլյացիա առաջ ընթաց մի չափ անդրովէիտն յան աղբարաբային յերկիրներում: Յերկրորդ՝ 1981 թ. աշնանը անդ հասցըրեց, զոր Անդիւն հբաժարվեց վոսկու ստանդարտից և

բոլոր անզլիական դոմինիոնները, Հնդկաստանն ու Մկանդիան պայման յերկիրները հարմարվեցին անզլիական արժեղուկված ֆունստ ստերիլինգին: Ընթարք ալիքն սկսվեց 1933 թ. աշնանը ՀԱՍԴ-ի նրանցումով վոսկու ստանդարտից: Այս յերրորդ ամփուս դեռ չի տնօցել և բոլորովին անկարելի չեղական առ հարկադրված լինի հրաժարվելու վոսկու ստանդարտից:

Արդյունքները 1933 թ. նոյեմբերին հետևյալներն են.

1) Կան դեռևս 4 պետարյուններ իսկական վոսկու ստանդարտով, այսինքն՝ այնպիսի պետություններ, վորտեղ քանկնուաներն ըստ ցանկության կարող են վոսկով փոխանակվել պարբեռակայն և վոսկին կարելի յև աղաւառելու յերկրից դուրս տունել: այդ յերկիրներն են՝ Ֆրանսիան, Շվեյցարիան, Հոլլանդիան, Բելգիան:

2) Կա պետարյունների մի խումբ՝ վոսկու ձևական ստանդարտով, դեպի դուրսը, մյուս յերկիրների վերաբերմամբ, նրանց վայսուան հրմենած և վոսկու պարիստեամբ վրա Բայց այդ բանը ձեռք ե բերգում վո՞չ թե վոսկու ազատ շարժման միջոցով, ինչպես այդ լինում և վոսկու իսկական ստանդարտ ունեցող յերկիրներում, այլ արտաքին առևտորի խիստ կարգավորման, վայրուտային սահմանափակումների ու սեփական բանկնուաների արտածումն արգելելու միջոցով (միքանի յերկիրներում սրան ավելանում են առևտաքին պարտգերի չլինարաւմբ): Այս խմբին են պատկանում Դերմանիան, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան, Չեխոս-Սլովակիան, Բուլղարիան, Լատվիան, Լիտվան: Այս յերկիրներից միքանիւում, ինչպես, որինակ, Դերմանիայում, վաստորեն յերկու վայրուտային կուրս կա: Միկը—պաշտօնական, վոսկու պարիստեամբ համապատասխանող, պետության կողմից յերաշխավորված վայրուտային վճարումների համար յերկրորդը—ուսարերկրացիների ձեռքում դաշնված մարկերի զումարի համար, այն մարկերի, վորանց շրջանառություն ունեն միմիայն յերկրի ներսում (ռեզիստրային մարկ և այլն) 20-ից մինչև 50 % կորուստով: Եերջապես, կա նաև յերրորդ կուրսը—ըսկ մարկը՝ ուսարերկրյա բանկնուաների հետ վորխանակվելիս, բայց սրա մասին հավաստի տվյալներ չկան:

3) Մյուս բալոր յերկիցները բացահայտ կերպով՝ արժեգրկված վայութա ունեն:

Արժեգրկումը (տոկոսներով՝ վուկու պարիսետի նկատմամբ)

Տաղանդիա	Անդիմ և գոմինիներ	ՀԱՄՆ		
63	35	40		
ԱԿԱՆԴԻՄԱՆԱԼՈՒՄՆԵՐ				
Եզերիա	Դանիա	Նորվեգիա	Աստուածածին	Ֆինլանդիա
40	45	41	34	44
ՀԱՐՑԱՎԱԾԱԿԱՆ—ԸՆԴՐՈՒՅԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Արքարիա	Սովորիա	Փորտուգալիա	Հունաստան	Հարավ-Ալավիա
22	57	32	56	19
ՀԱՐՑԱՎԱԾԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Արքական- արքան	Բուլի- գիա	Բրու- դիւրա	Զիլի- բիա	Կուսա- դական
40	65	54	50	57
ԱՌԱՋԱՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Յանձնաւան	Զինաստան	Հնդկաստան		
89	50	85		

Նրանց մեջ յերեք խումբ կա.

ա) Սերլինգյան բլոկ: Այս այն յերկիրների խումբն է, որոնք անստեղապես սերտարեն կազմված են Անդիմիայի հետ Նրանց վկայակումուն—մի Շնորհելուկը և ֆնտին, այսինքն՝ նրանց վայուսանների կուրսը վկանու. Տկառամամբ՝ կարգավորված եր ֆունտ ստերլինգի կուրսի շարժմանն համապատասխան։ Այլ կերպ ասած՝ անդիմական ֆունտը նրանց համար վորոշ իմաստով համաշխարհ հային դրամի գեր և կատարում է Այս խմբին են պատկանուած անդիմական բոլոր օգտինիներն ու դադութները, Ականդիմական յերկիրները, Փորտուգալիան, Արգենտինան ու Բրազիլիան։

ր) Դոլլարյան բլոկ—ՀԱՄՆ և միջին ու հարավային Ամերիկայի միջանի պետությունները, վորոնց վայուսածան Շամփելուկը և հանդիսանում դոլլարին:

Ո) Մենացած պետությունները, վորոնց վայուսաներն արժեզրկված են, բայց համաշխարհային վայուսաներից վոչ միևնույն համար հանդիսանում է դոլլարին:

Կարևորագույն վայուսաների արժեզրկման աստիճանը վոսկու համեմատությամբ 1933 թ. հոկտեմբեր—նոյեմբերին ցույց և տարիս նախորդ ավագուստից (հջ 34):

Վայուսաների այս գրեթե ընդհանրական արժեզրկումը վարակական տեսակետից արգի նպամատմի նոր մօմենտ և նանդիսաթում: Նախորդ ճշնաժամերից վոչ միևնույն միջին նույնիսկ վորոնե նման բան չի յեղել:

Այսակա աչքի յե զարնում այն հանդամանքը, վոր այն բոլոր պետությունները, վորոնք իսկապես կամ ձևականորեն ողանականում են վոսկու պարիտետը—բացառությամբ տիպիկ ռանտյե-յերկիրների, ինչպիսիք են՝ Հռանմիան ու Շվեյցարիան—այնպիսի պետուրյուններ են համեմատնում, վորոնք հիմ-պատերազմյան ռշաբնում մի անգամ արդեն սաստիկ ինֆլյացիա յին տեսլ. գերանական, լինուկան, հունգարական և այլ բուրժուազիայի կողմից վոսկու պարիտետն համառորդին պահպանելին, ինտրկի, վոչ մի դեպքում չի նշանակում, թե նրանց տնտեսությունն ավելի հաստատուն չի քայլի վրա յե կանգնած տնտեսապես, քան ամերիկական կամ անդիմական տնտեսությունը: Այդ նշանակում ե, վոր նրանք հատ-

1 Վոսկու վայուսայի արժեզրկման նախորդ գեղցերը զըեթե բացառապես պատերազմերի հուսեանց ելին մնում, վորոնց հասցնում ելին իսկական ինֆլյացիայի թղթապանների արտարկետն պատերազմի ծախըերը ծածկելու համար: Վայուսանուների արգի արժեզրկումը վոչ մի տեղ հնդւյացիայի նետելվածք չի նախդիսանում, բառի այս կլասիկական իմաստով, այսինքն՝ թղթապանների շրջանառության ավելացում՝ պետական դիմիցիաց ծածկելու համար միշտ և, մի բանէ յերկիրներում ճշնաժամի ժամանակ թղթապանների շրջանառություն ովելացավ, թեև զնիցի անկաման ու արտազրության կրնառման հատեանքով այն պետք և պակասեր, բայց ավելացումը տեղի ունեցավ զհշչ թի անմիջականորեն ըյուղային՝ զերիցիաց ծածկելու համար, այլ այն պատճառով, վոր վարկային ճշնաժամի հետաներով հարկ յեղակ սաստիկ ավելացնել բանկերի ու այլ ձեռնարկությունների զըամորկային պահեստները:

կապես հենց իրենց տնտեսության բուլության հետևանքով յերկյուղ են կրում, թե իրենց չի հաջողվի սահման դնել վայրուտակի արժեքը մասնը. իսկ վայրուտայի արժեքը կրկում հետապահման ըրջանի որինակով՝ սոցիալական ճշնաժամի վտանգավոր արդյունացման կհասցներ:

և միջի այլոց. մեր զբականության մեջ հաճախ չտվադանց պարզացրած ձևով և պատկերվում վայլուտայի արժեղորդութիւնը արտաքին-շուկայի համար պայքարելու միջոց, իբրև բանվոր դասակարգին լրացաւքչէ կերպով շահագործելու միջոց, իբրև մի յնընույթի, վորը բուրժուազիայի համար միմիշայն շահավետ կողմեր ունի: Այդ, ինարկե, սխալ և և դիալեկտիկական չե: Վայութայի առեղբայր նօթարակամ կերպով գործադրվող դեղ չի հանդիսանում նզնածուի դեմ, այլ նկանգուրյան սիմպտոմ և և միենալոն ժամանակ նգնածամի նետագույն խորացման տարերային գործն: այս, ինարկե, չի բացառում, վոր բուրժուազիան անխուսափելի դարձած ինֆլյացիան ոգտագործի իբրև պայքարի միջոց՝ արտաքին-շուկաների համար: Վայլուտայի արժեղորդումը ժամանակավոր ոգուածներ և տալիս համացխարհային շուկայում վաճառահանման

1931—1933 թ. թ. պետական սնան

1 9 3 1

Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս
